ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 ապրիլի 2023 թվականի N 487 - Ա

ԳՈՒՅՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերը, «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 247-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Լիտվական «ՋեյԷսՍի Սոլիթ Թեքնիքս» ընկերության կողմից «Դի Օհմ Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունով ստացված, ապա «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 05100010/241022/0091058 (մաքսային արժեք՝ 45,429,174 դրամ, բրուտտո քաշ՝ 11769.1 կգ) և 05100010/241022/0091059 (մաքսային արժեք՝ 57,450,384 դրամ, բրուտտո քաշ՝ 14992.1 կգ), 2022 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 05100010/231122/0104218 (մաքսային արժեք՝ 43,974,805 դրամ, բրուտտո քաշ՝ 2654 կգ) և 2023 թվականի հունվարի 19-ի թիվ 05100010/190123/0004729 (մաքսային

արժեք՝ 19,938,974 դրամ, բրուտտո քաշ՝ 655 կգ) ապրանքների հայտա-ռարագրերով ձևակերպված և պետական սեփականությանը փոխանցված արևային վահանակներն ու այլ սարքավորումները (այսուհետ՝ գույք) փոխանցել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարությանը, և վերջինիս կողմից՝ նվիրաբերության պայմա-նագրի հիման վրա, հանձնել սույն որոշման հավելվածում նշված նվիրառուներին՝ շրջակա միջավայրի աղտոտման և կլիմայի փոփոխության խնդիրները լուծելու՝ էներգետիկ կարիքներն ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթա-կառուցվածքների նախարարին ու Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 30-օրյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթա-կառուցվածքների նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտելուց հետո 30-օրյա ժամկետում ապահովել գույքի նվիրաբերության պայմանագրերի կնքումը՝ դրանցում նախա-տեսելով դրույթներ գույքը բացառապես շրջակա միջավայրի աղտոտման և կլիմայի փոփոխության խնդիրները լուծելու՝ էներգետիկ կարիքներն ապահովելու նպատակով օգտագործելու, սույն կետում նշված պայմանները չպահպանելու դեպքում՝ նվիրաբերության վերացման հնարավորության մասին, ինչպես նաև գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ սահմանելով նաև, որ հանձնման-ընդունման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են գույքն ընդունող կազմակերպությունների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ